

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

22.01.2014 թ

գ. Արգինա

ՀՀ Արմավիրի մարզի Արգինա համայնքի ղեկավարի 2013 թվականի աշխատանքային գործունեության վերաբերյալ.

Արգինա համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով ժողովին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ Համլետ Կուրդինյանը, ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ, գյուղապետարանի աշխատակիցներ:

Նախագահությամբ համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանի Քարտուղարությամբ՝ աշխտակազմի քարտուղար Ս. Հարությունյանի Ձեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանը Հարգելի հյուրեր, Արգինա համայնքի բնակիչներ.

Թույլ տվեք Ձեր ուշադրությունը հրավիրել իմ՝ համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի կողմից 2013թվականին կատարած աշխատանքների մասին՝ ըստ համապատասխան բնագավառների.

Սոցիալական բնագավառում՝

Կառուցվել է դպրոցի գույքարանը, անասունների համար տեղադրվել է խմելուջրի երկաթյա խմոցներ, համայնքում պարբերաբար իրականացվում է փողոցների սպրաթափության աշխատանքներ, մասնակի վերանորոգվել են համայնքի ներսի փողոցները:

Մանկապարտեզի բակում Մանուկների Բարեգործական Հիմնադրամի օգնությամբ կառուցվել է խաղահրապարակ, ինչպես նաև ձեռք են բերվել և մանկապարտեզի շուրջը տնկվել են դեկորատիվ ծառեր և ծաղիկների թփեր: Համայնքի կենտրոնում տեղադրվել է սպասարան:

Ռոտոգման սեզոնին ընդառաջ մաքրվել և վերանորոգվել են ռոտոգման ներքին փակ ցանցը, ինչպես նաև համայնքի դաշտերի ռոտոգման կիսախողովակների ցանցը: Գյուղապետարանի կողմից ձեռք է բերվել և համայնքի տնամերձերի ռոտոգման նպատակով կառուցվել է ռոտոգման նոր ցանց:

Համայնքի բնակիչներին Պետության կողմից աջակցության ծրագրով զնվել և բաշխվել է էժան դիզելային վառելիք և սզոտական պարարտանյութ:

Ավագանու կողմից հաստատվել է մայիսի 17 – ի կարկտահարությունից տուժված հողօգտագործողներին պետ բյուջեից փոխհատուցում սուսցողների ցուցակը, հողօգտագործողներին են բաշխվել ձմերուկի, արևածաղկի, վարունգի և եգիպտացորենի սերմեր :

Համայնքի մեկ ընտանիքի հատկացվել է 100.0 հազար դրամ միանվագ դրամա-

կան օգնություն՝ երեխայի դժբախտ դեպքի կապակցությամբ, ևս մեկ ընտանիքի հատկացվել է 100.0 հազար դրամ միանվագ օգնություն՝ խոտի դեզն ամբողջությամբ այրվելու կապակցությամբ:

Համայնքի սոցիալապես անապահով տասը ընտանիքների հատկացվել է 50.0 հազարական դրամ միանվագ դրամական օգնություն:

Մեծն Ներսես Բարեգործական Հիմնադրամի աջակցությամբ ձեռք են բերվել և համայնքի դպրոցականներին և մի շարք ընտանիքների բաժանվել են ռետինե հողաթափեր և ձմեռային տաք կոշիկներ:

Մեծ շուքով կազմակերպվել և անցկացվել է համայնքի երեսուներեսային նվիրված տոնակատարությունը: Անցկացվել են նաև անկախության տոնին և ամանորին նվիրված միջոցառումներ: Ամանորյա միջոցառման ժամանակ համայնքի ութսունից ավելի մանկահասակ երեխաների բաժանվել են ամանորյա նվերներ: Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել և անցկացվել է ավագանու տասնմեկ նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են համայնքին հուզող բազմաթիվ հարցեր, ընդունվել են որոշումներ և հետամուտ եղել դրանց կատարմանը:

2013 թվականի բյուջեի կատարողականը կազմում է

1. հողի հարկ 6558.27 հազար դրամ, կամ՝ 100.0 %, գույքահարկ 424.21 հազար դրամ կամ 100.0 % հողի վարձավճար՝ 872.8 հազար դրամ՝ կամ 100.0 %, տեղական տուրք՝ 76.6 հազար դրամ կամ 100.0 %;

Կազմակերպվել և անցկացվել են զարնանային գորակոչի աշխատանքները, կազմվել են անասունների հունվարյան հաշվառման ցանկերի հաշվառման մասին հաշվետվություններ:

Կազմվել և ավագանու հաստատման են ներկայացվել համայնքի հողային հաշվեկշռի մասին հաշվետվությունը:

Արմավիրի մարզպետարան, ինչպես նաև տարբեր կազմակերպություններ են ուղարկվել հարյուր քառասունից ավելի տարաբնույթ գրություններ, հաշվետվություններ:

Մարզպետարանի ֆինանսական բաժին, ինչպես նաև հարկային տեսչություն և սոցապ բաժիններ են ուղարկվել քսանից ավելի հաշվետվություններ, գրություններ: Քաղաքացիներից ստացվել են երեսունից ավելի տարբեր դիմումներ, որոնք ստացել են իրենց դրական պատասխանները, ինչպես նաև տրամադրվել են հարյուրութսունից ավելի տարբեր բնույթի տեղեկանքներ:

Համայնքի հիմնախնդիրներն են՝

Համայնքի թիվ մեկ խնդիր է գյուղի խմելաջրի, ոռոգման ջրի ներքին փակ ցանցերի անմխիթար վիճակը, դրանք գտնվում են վթարային վիճակում, որի պատճառով մեծ են ջրի կորուստները, այդ իսկ պատճառով ենթակա են փոփոխման և վերանորոգման:

Համայնքը չունի մշակույթի տուն, գյուղապետարանի շենք, գազաֆիկացված չէ,

փողոցները գտնվում են անբարեկարգ վիճակում, հաճախակի կարկտահարու-
թյունները մեծ վնասներ են պատճառում գյուղատնտեսական արտադրությանը:
Գյուղից մեծ թիվ են կազմում արտագնա աշխատանքի մեկնողները:

Արգինա համայնքի ղեկավար  Մ. Գրիգորյան

